


«ՊԷՅՐՈՒԹԻ ՉԱԻԱԿՆԵՐ» ՅԱՆԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ

ՈՒՐԱԽ ԵՆՔ, ՈՐ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱԹՈՒԻՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐԱՇԱՍ ՏԵՏԵԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԸԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կ'ՐՈՒՔ ՏՈՒՄՍ ՄԱՍՁՈՒՄԻ

Երէկ, կէսօրէ ետք ժամը 4:30ին, մամուլի սենտի-բաշի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին Պէյրուսի Ա. ընտրաշրջանի երեսփոխանական սիւննի աթոռին թեկնածու Ֆուատ Մախգուլմի յայտարարեց իր գլխաւորած «Պէյրուսի Զաւակներ» ցանկը, որուն մաս կը կազմեն երեսփոխան Արրահամ Տէտէան

ընտրաշրջանի թեկնածու՝ Միհրան Սէֆէրեան, մամուլի ներկայացուցիչներ եւ Ֆուատ Մախգուլմի ու իր ցանկին անդամներուն համակիրները:
Ոստիկանական Մախգուլմի, որ անդրադարձաւ վերջին տասնամեակին ընթացքին երկրին տնտեսական ճգնաժամին եւ յայտնեց, որ ինք արդէն իսկ ճշդած է այս տագնապին ժխտական



Չախէն աջ՝ Ժան Հատատ, Անթուան Զլինոս, Միշէլ Սեպին, Ֆուատ Մախգուլմի, Սուհիտին Տուրան եւ Արրահամ Տէտէան:



Ֆ. Մախգուլմի՝ «Հայկական Միասնականութեան Զակատ»ի թեկնածուներու հետ: (Լուսանկարներ՝ Պ. ԶԱՌՈՒԿԵԱՆԻ)

Տէտէան կը ներկայացնէ իր հայու-Հայկական Միասնականութեան շահագործողները: Ան աւելցուց, որ ինքն իր ինքնուրուի շահագործողները:

Սուհիտին աւարտին, աւելի տրուեցաւ հարցումներու:

ԿՈՉ

27 Օգոստոս եւ 3 Սեպտեմբեր 2000ին, տեղի պիտի ունենան Լիբանանի էրեսփոխանական ընտրութիւնները:

Լիբանանահայութիւնը այս ընտրութիւններուն կը ներկայանայ միացեալ ճակատով: «Հայկական Միասնականութեան Զակատ»ի թեկնածու առաջադրուած են

Ժորժ Գասարա՛ի Չախէի ընտրաշրջան Արրահամ Տէտէան՝ Պէյրուսի Ա. ընտրաշրջան Միհրան Սէֆէրեան՝ Պէյրուսի Բ. ընտրաշրջան Յակոբ Բագրատունի՝ Պէյրուսի Գ. ընտրաշրջան Արթուր Նապարեան՝ Պէյրուսի Գ. ընտրաշրջան Ստեփան Ապաճեան՝ Պէյրուսի Գ. ընտրաշրջան Սեպուհ Յովնանեան՝ Հիւսիսային Մէքիի ընտրաշրջան

«Հայկական Միասնականութեան Զակատ»ի ամբողջական յաղթանակով լիբանանահայութիւնը անգամ մը եւս պիտի արտայայտէ լիբանանեան հայրենիքին հանդէպ իր անվերապահ հաւատքը եւ ցոյց պիտի տայ իր անընդունաւոր քաղաքական կշիռը:

Այս ճակատին ամբողջական յաղթանակով, լիբանանահայութիւնը պիտի գայ ըսելու իր բարեկամներուն, ինչպէս նաեւ հայ ժողովուրդին ու հայրենեան հակադրուող բոլոր հատուածներուն, որ ոչ մէկ ուժ եւ ոչ մէկ լծակ կրնայ լիբանանահայութիւնը հեռացնել իր ազգային արմատներէն եւ տեսլականէն:

Այս մարտահրաւերը դիմակայելու համար, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ երթայ դէպի քուէատուփ եւ թիկունք կանգնի լիբանանահայութեան ամբողջական կամքը մարմնաւորող՝ «Հայկական Միասնականութեան Զակատ»ին:

Պատմութիւնը ցոյց տուած է, որ լիբանանահայութիւնը իր պատիւն ու արժանապատուութիւնը ոչ մէկ ատեն սակարկած է եւ միշտ ալ ունեցած է յանձնառութեան բարձր գիտակցութիւն: Այսօր, դարձեալ ան պիտի գայ իր վճռական ՈՉ ըսելու այն բոլոր ուժերուն, որոնք կը փորձեն մեր ազգային նկարագիրը խաթարել եւ մեր հիւքնորոյն դիմագիծը ջլատել:

Երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակին Վ. Յ. Գ. Ընտրական Կեդրոնական Մարմինը տարբեր շրջաններու մէջ նախաձեռնած է ժողովրդային հաւաքներու, որոնց ընթացքին մեր ժողովուրդը աւելի մտէն իրազեկ պիտի դառնայ տիրող մթնոլորտին:

«Հայկական Միասնականութեան Զակատ»ի յաղթանակը՝ Լիբանանահայութեան յաղթանակն է:

Այս առիթով, կոչ կ'ուղղենք նաեւ բոլոր անոնց, որոնք տակաւին չեն ապահոված իրենց ընտրական քարտը, ներկայանալու Վ. Յ. Գ. ակումբները, իրենց հետ ունենալով անձնաթուղթի յուսալուծական եւ երկու լուսանկար:

Վ. Յ. Գ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

(աւետարանական աթոռ), Մուհիտին Տուրան (սիւննի), Միշէլ Սեպին (յոյն ուղղափառ), Ժան Հատատ (յոյն կաթողիկէ) եւ Անթուան Քլինոս (մարոնի):
Մամուլի ասուլիսին ներկայ էին Վ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, հայկական երեսփոխանական պլոքին ներկայացուցիչ Սեպուհ Յովնանեան, «Հայկական Միասնականութեան Զակատ»-ին Պէյրուսի Գ. ընտրաշրջանի թեկնածու Յակոբ Բագրատունի եւ Բ.

բազմակողմանի անդրադարձները մեղմացնելու ծրագիր մը: Ան յայտարարեց ցանկին քաղաքական ուղեգիծը, որ պիտի ծառայէ հայրենիքին եւ ժողովուրդին բարգաւաճման: «Այս բոլորը կարելի է իրանդ գործել բոլոր լիբանանցիներուն միջեւ ազատ եւ ժողովրդավար երկխօսութեամբ», շեշտեց նա:
Իր խօսքի աւարտին Մախգուլմի գոհունակութիւն յայտնեց, որ աւետարանական աթոռի թեկնածուներու հարցազրույցին եւ Բ.

ԱՎԵՆԱՐԿ
ՈՉ ԴՐԱՄԻՆ, ԱՅՈՒ ԳԱՂԱՓԱՐԻՆ
Չգո՛ւշ, դրամը սկսած է սողալ:
Երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակին հեռաձայններ սկսած են հասնիլ այն ծնողներուն, որոնք վերամուտին խորհրդանշական կրթնապատուէր տուած էին. անոնց լիշեցուցած են, որ ժամանակը եկած է «քուէանպատուի»:
Այս երեւոյթը պարզապէս կը նուստուցընէ կրթնապատուը:
Մեր ծնողները այս «դրամաբանութեան» չեն ենթարկուիր: Անոնք գիտակից են եւ շատ լաւ գիտեն, որ ազգը, այսինքն՝ առաջնորդարանը, եկեղեցին, թաղականութիւնը,
Յ. ԼԱՏՈՅԵԱՆ
Տարբ. էջ 10

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ Ը. Յ. Գ. ԹՐԻՓՈԼԻԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Երեսփոխանական ընտրութիւններու նախապատրաստական աշխատանքներու ծիրէն ներս, երէկ Թրիփոլիի Ը. Յ. Գ. ակումբի այցելեցին Հիւսիսի շրջանի թեկնածուներ՝ Երեսփոխան Ֆարիտ Մարքարէ (յոյն ուղղափառ), Երեսփոխան Սէյիտ Աբրը (մարոնի), զոկու: Ժոզէֆ Սապրէ (յոյն ուղղափառ) եւ Թոնի Հապիպ (յոյն ուղղափառ):
Հանդիպումներուն ընթացքին Ը. Յ. Գ. Թրիփոլիի կոմիտէի ընկերներուն հետ քննարկուեցան ընտրութիւններուն վերաբերող հարցեր:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ **ՎԱՆԱՅ ՉԱՅՆ**
Այսօր՝ Ուրբաթ 11 Օգոստոս, ժամը 12:30ի լուրերն ենք Ունկնդրեցէք՝
Արամ Ա. կաթողիկոսի գրոյցը՝ Իրան իր այցելութեան, ինչպէս նաեւ՝ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակին, Լիբանանահայութիւնը յուզող հարցերու մասին:

ՊԵՔԱԱՅԻ Ը. Յ. Գ. ԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ

Ներկայութեամբ
ՊԵՔԱԱՅԻ «ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՅԱՆԿ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ
●Գեղարուեստական յայտագիր
Կը մասնակցին
ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆ
ՎԻԳԷՆ ՏԻՇՉԵՔԷՆԵԱՆ
ՄՇԵՐ ԶԱՓԱՐԵԱՆ
Ընկերակցութեամբ՝
ՇԱՆԹ ՏԻՇՉԵՔԷՆԵԱՆԻ
եւ իր նուագախումբին
Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 11 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 8:00տն սկսեալ, Համազգայնի ակումբի շրջափակին մէջ, Այնճաբ:

ԹԵՂՐԱՆ ԿԱՐՃ ԴԱԴԱՐԷ ՄԸ ԵՏՔ ԱՐԱՖԱԹ ՈՒՂՂՈՒԵՑԱԿ ԴԷՊԻ ՄՈՍԿՈՒԱ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ երէկ կոչ ուղղեց Իրանի՝ ժողովրդի մը հրաւիրելու համար իսլամական խորհրդատուական կազմակերպութիւնը, որպէսզի օժանդակէ մօտիկ ապագային յայտարարուելիք պաղեստինեան պետութեան դիմագիծը մշակելու աշխատանքին:

Արաֆատի ընկերակցող պատուիրակութեան անդամներ եւ իրանցի պաշտօնատարներ յայտնեցին, որ պաղեստինցի ղեկավարը Թեհրան ժամանած է կարճ այցելութեան մը համար: Արաֆատը տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ Մոհամէտ խաթեմի հետ, որ կը նախագահէ Ի. Ի. Կ. իսլամատարներին: Արաֆատ կ'ուզէ, որ իսլամական աշխարհը համախոհութիւն մը գոյացնէ պաղեստինեան պետութեան մասին: Արաֆատ - խաթեմի տեսակցութեան ներկայ էին արտաքին գործոց նախարար Քամալ իրազի եւ նախկին նախագահ Հաշեմի Բաֆսանճանի:

Արաֆատ որոշած է 13 Սեպտեմբերին հուշակէլ պետութիւնը: Ան պատրաստակամութիւն յայտնած է յետաձգելու ժամկէտը, եթէ արաբ ղեկավարները զայն յարմար նկատեն: Իրան տակաւին չէ հակադարձած այս յայտարարութեան: Մեկնարաններ կ'ըսեն, որ Թեհրան գոյուշաւոր կեցուածք կ'որոգորէ Արաֆատի հանդէպ: Թեհրան անցեալին ամբաստանած է Արաֆատը ամբողջական ճշմունքու ենթարկուելով պաղեստինեան շահերը ծախելու յանցանքով: Չգուշաւոր այս մօտեցումը ի յայտ եկաւ, երբ գաղջ ընդունելութիւն մը տրուեցաւ պաղեստինցի ղեկավարին: Արաֆատ, որ այլ երկիրներու մէջ կ'ընդունուէր նախագահներու կամ արտաքին գործոց նախարարներու կողմէ, Թեհրանի մէջ ընդունուեցաւ արտաքին գործոց փոխ նախարարի մը կողմէ: Իրան վերապահ է Արաֆատի հանդէպ եւ այս այցելութիւնը տեղի պիտի չունենար, եթէ պաղեստինցի ղեկավարը անձամբ չպահանջէր խաթեմի հետ տեսակցութիւնը:

Աւարտելէ ետք Իրան այցելութիւնը, Արաֆատ Մոսկուա ուղղուեցաւ տեսակցութիւն ունենալու համար նա-

Տարբ. էջ 10

ԼՕԻԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԻՇՏ ՅԱՆՁՆԱԹՈՒ ԵՂԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Երէկ. առաօտեան ժամը 11:00ին. Յակոբ Տեր Մելքոնեան Բատերարտիկին մէջ տեղի ունեցաւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի անդամներին հետ Վ. Յ. Գ. Կազմակերպեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին միջոցով հանդիպում-հաւաք մը՝ առնչուած լիբանանեան երեսփոխանական ընտրութիւններու նախապատրաստական աշխատանքներուն:

Հանդիպումին ներկայ էին երեսփոխան Արրահամ Տէտէան, Պէյրուսի Գ. ընտրաշրջանի «Հայկական Միասնականութեան Զակատ»ի թեկնածուներ Յակոբ Բագրատունի եւ Ստեփան Ապաճեան. ԼՕԻԻ Շրջանային Վարչութեան անդամներ եւ ԼՕԻԻ անդամներ իր բացման իրաւունքով մէջ յայտնեց. ԲԵ ԼՕԻԻ անդամները միշտ յանձնառու եղած են իրենց պարտաւորութիւններուն. որոնցմէ մէկն է հայրենեան եւ լիբանանահայ համայնքին շահերուն պաշտպանութիւնը:

Այս իրաւունքը Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը. որ ներկաներուն պարզեց լիբանանեան երեսփոխանական ընտրութիւններուն նախօրեակին երկրի քաղաքական կեանքին մէջ տիրող մթնոլորտը: Ան շեշտեց հայութեան վայելած քաղաքական կշիռը անփոփոխ պահելու անհրաժեշտութիւնը. իր սեպուհը Պէյրուսի Ա. ընտրաշրջանին մէջ աւետարանական արժանի հալեցի դիմագիծին եւ հայկական երեսփոխանական պլոքին իրենց քաղաքական անցած միասնորոշ պահպանման հրամայականներուն մասին: Ան ըսաւ. ԲԵ

Տարբ. էջ 10

Վ. Յ. Գ. «Գ. ՆԺԳԵՀ» ԿՈՄԻՏԵ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ

Ընկերային Յանձնախումբ
Ներկայութեամբ
«Հայկական Միասնականութեան Զակատ»ի թեկնածուներուն
Մասնակցութեամբ սիրուած երգիչներ
ՎԱՐՈՎ ՄԻՆԱՍԵԱՆԻ, ՅԱՆՔ ԿԱՅՄԱՆԵԱՆԻ,
ՄԱՆՈՎ ՄԻՆԱՍԵԱՆԻ, ՇԱՔՔ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ,
ՍԻԼՎԻ ՏԵՄԻՐԵԱՆԻ, ԼԻԶԱ ԺԱՔՈՐԵԱՆԻ:
Ընկերակցութեամբ՝ ՍԵՂՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ
եւ իր նուագախումբին
Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 11 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 9:00տն սկսեալ, Համազգայնի ակումբի շրջափակին մէջ, Այնճաբ:

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿԸ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ՈՒՎԻԲ ՀԱՐԻՐԻԻ

Վարչապետարանի տեղեկատվական գրասենյակը երկկ հրատարակեց հաղորդագրություն մը, որուն մէջ կը պատասխանէ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Հարիրի քննադատած էր վարչապետ Հրստ, ըսելով, որ նա օգտագործած է պետական պատկերասփիւռի կայանը՝ երեսփոխանական իր ցանկը յայտարարելու համար: Վարչապետին գրասենյակը կը հաղորդէ, որ Հարիրի վարչապետութեան իր շրջանին, ինք եւս իր ցանկին յայտարարութիւնը կատարած էր պետական պատկերասփիւռին: Հաղորդագրութիւնը կ'ըսէ, որ Հարիրի ինք է, որ կ'օգտագործէ մետիան իր հաշուոյն եւ որուն ընթացքին գրապատուութիւնը կը կատարէ ուրիշներու հասցէին: Հաղորդագրութիւնը կ'աւելցնէ, որ Հարիրի վարչապետ եղած շրջանին արտօնագիր տուաւ իր անձնական պատկերասփիւռի կայանին, ապա արբանեակային սփռումի առջին արտօնագիրը դարձեալ տուաւ իր կայանին, որ աւելի ուշ օգտագործեց կառավարութեան դէմ իր քննադատութիւնները կատարելու համար:

ՆԱԽԱԳԱՆ ԼԱՆՈՒՏԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Հանրապետութեան նախագահ Կոր. Ըմիլ Լախուր Պապատիւի պալատին մէջ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոտիւր եւ անոր հետ քննարկեց երկկողմանի յարաբերութեան կայունացումը: Ռուս դեսպանագետը երէկ այցելեց նաեւ քանակի ընդհանուր հրամանատար Կոր. Միշել Սելիմանի:

Նախագահը ընդունեց նաեւ երեսփոխան Նաժահ Ռաքիւր եւ Պեքաայի նահանգապետ Միլատ Քարէի:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՅԵԼԵՑ ԵՆՅԻ ԸԱՄՍԵՏՏԻՆԻՆ

Երկկ առաւօտ Արամ Ա. կաթողիկոս այցելութիւն մը տուաւ շիի համայնքի գերագոյն խորհուրդի նախագահ շէյխ Մուհամմէտ Մեհարի Ծամսէտտիին եւ բարի ապաքինում մաղթեց անոր:

Միջ կողմէ, երկկ երեկոյեան Արամ Ա. կաթողիկոսին այցելեց մարոնիներու լիկայի նորընտիր նախագահ Էմիր Հարէս Շեհապ: Ան եղաւ վեհափառին ընթրիքի հիւրը:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Սարգիս Գուլումճեան եւ գաւազանք Տիկին Մանուշակ Գուլումճեան

Տիկին Էլիզ Մարտիրեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Աճմէտ Նաչառլի եւ գաւազանք Մամիլիք ընտանիք

Տէր եւ տիկին Վարդան Գուլումճեան

Քիթնճեան ընտանիք

Արապեան ընտանիք

Համայեան ընտանիք

Խաչատուր ընտանիք

Մամրուրեան ընտանիք

Չէլիճեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՄԱՐԻ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՍԻՆԱՆԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 8 Օգոստոս 2000, առաւօտեան ժամը 10:00ին, «Մար Եուսէֆ» հիւանդանոցին մէջ:

Յուզակցութեան արարողութիւնը պիտի կատարուի Ծարաթ, 12 Օգոստոս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, նոր Մարաշի Մ. Քառանից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆորն Երպիկի Ազգային գերեզմանատունը:

Ներկայ ընդունիլ իբրեւ մահադ:

Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Փոլիկարյոս, Kouyoumji հաստատութեան դիմաց, Շաբէ Պետիբեան շէնք, 2րդ յարկ, Կիրակի 13 եւ Երկուշաբթի 14 Օգոստոսին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սոնա Գարակէօզեան

Տէր եւ տիկին Արտաւազ Գարակէօզեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Աւետիս Հաճըրեան

Տիկին Թագուշ Գարակէօզեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Մանուկ Յակոբեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Աւետիս Գասպարեան

Օրիորդ Մարի Յակոբեան

Տէր եւ տիկին Սարգիս Եղիայեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Լեւոն Ճուրճեան եւ գաւազանք

Տէր եւ տիկին Միանա Յակոբեան եւ գաւազանք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց գաւակին, եղբոր գաւակին, քրոջ գաւակին եւ հարազատին՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէրոս 1969ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 9 Օգոստոս 2000ին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, արկածի պատճառով:

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 10 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 2:00ին Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

Ներկայ ընդունիլ իբրեւ մահադ:

Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանին մէջ, Ամանոս քաղ Գարակէօզեան շէնք, 4րդ յարկ, Հինգշաբթի 10, Ուրբաթ 11 եւ Շաբաթ 12 Օգոստոսին:

ՆԱԶԱՐ ՆԱԽԱՐԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Երկկ յետմիջօրէին «Լը Կապիթէլ» պառնոկին մէջ, Պէրոսի Գ. ընտրաշրջանի երեսփոխանական թեկնածուն (Հայ կաթողիկէ աթոռին) Նազար Նաճարեան պաշտօնակէս յայտարարեց, թէ կը քաջուր ընտրապայքարէ:



Նաճարեան ասուլիսի պահուն:

Ան ըսաւ, թէ խոստացած է երթարկուիլ Հ. Յ. Դ. ի որոշումին, նաեւ այն պարագային, երբ կուսակցութիւնը գինք նկատի է'ունենար իրրեւ թեկնածուն, հետեւաբար կը քաջուր ընտրապայքարէ: Ան իր համակրներուն կողմէ ղեկգնցնելու գործակցութեան հետ կ'ընդգրկուի Դաշնակցութեան ցանկին:

Մամրոյատուլիսի աւարտին տեղի ունեցան թղթակցներու բազմաթիւ հարցումներ:

Պատասխանելով հարցումի մը, Ն. Նաճարեան ըսաւ. «Պէտք է ըսել, որ Դաշնակցութիւնը կը ներկայացնէ լիբանանեան ընկերութեան մէկ խումբ, որ հայրենիքն է. ասկէ մեկ-երկու Դաշնակցութիւնը կը ջանայ ներկայացնել ընկերութեան այլ խումբեր:

Կերուցեան այլ խումբեր:

«Թերեւեկան որոշ պայմաններ եւ Դաշնակցութիւնը պատրաստ է գաւազանք նկատի ունենալու: Ես ասկէ աւելի չեմ կրնար խօսիլ կուսակցութեան անունով, որ եթէ կ'ուզէ կրնայ արտայայտուիլ:

«Ես կ'ուզեմ բոլորին նկատողութեան յանձնել, որ առաջին օրէն մեր յարաբերութիւնները շատ լաւ են եւ ինքզինքին տուած են խոստում մը, որ կը գործադրուի: Ես

պէտք է շարունակեմ գործադրել խոստումս, որովհետեւ ըսած եմ, որ եթէ հորդգրէք թեկնածուն թիւնս, պատրաստ եմ յետս կուցելու գայն եւ օժանդակելու ու գորակցելու ձեռք թեկնածուններուն, որովհետեւ մեր պարտականութիւնն է Գ. ընտրաշրջանին մէջ ոչ միայն ներկայացնել հայկական խումբ, այլեւ աւելի ընդարձակ խումբ:

«Այս պատճառով ես կողմնակցեցի եւ կը շարունակեմ կողմնակցել գորակցելու Դաշնակցութեան թեկնածուններուն: Պէտք է ըսել, որ Գ. ընտրաշրջանին մէջ Դաշնակցութեան 3 թեկնածուններէն միայն մէկը կուսակցական է եւ միւս 2ը մաս չեն կազմեր Դաշնակցութեան: Կան միասնականութեան թեկնածուներ եւ ես կողմնակցեմ գորակցելու անոնց եւ իմ բոլոր ուժերս ի գործ դնելով պիտի աշխատիմ, որպէսզի անոնք յաջողին: Իմ ընտրապայքարս չէ աւարտած. անիկա կ'աւարտի 3 Սեպտեմբերին, երբ այս թեկնածուները կը յաջողին»:

ԺԵՄԱՅԷԼ - ԺՈՄՊԼԱԹ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հանրապետութեան նախկին նախագահ Ամին Ժեմաճէլ երկկ Պիքֆայայի իր ընկերարանին մէջ ընդունեց Լիբանանի Մուհամմէտ Գուլումճեանի Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթը, որ տեսակցութեան առարտին ըսաւ, թէ այցելութիւնը բարի գալուստ մաղթելու համար էր «եւ անշուշտ անցեալի չէր վերջնականապէս փակելու»:

Լիբանանի ղեկավարը ըսաւ, որ Դաշնակցութեան ղեկավարը ղեկավար էր իր ընկերարանին մէջ ընդունեց Լիբանանի Մուհամմէտ Գուլումճեանի Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթը, որ տեսակցութեան առարտին ըսաւ, թէ այցելութիւնը բարի գալուստ մաղթելու համար էր «եւ անշուշտ անցեալի չէր վերջնականապէս փակելու»:

Ինչ կը վերաբերի Ժեմաճէլի, ան ըսաւ. «Ուալիտ յիշեց մեր տան մէջ ընդունելու բոլորս համար ուրախութեան հանձնելի երեւոյթ է: Այս տունը իր տունն է նաեւ: Մենք յիշեցինք, թէ ինչպէս, ինչպէս կ'եղծուեցան մեր ու սիրով այս նոյն տան մէջ Փիեռ Ժեմաճէլը կ'ընդունէր Քամար Ժոմպլաթը: Ինչ կը վերաբերի քաղաքականութեան, ապա ինչպէս Ուալիտ Ժոմպլաթը ըսաւ, պէտք է փակել անցեալի չէր եւ նայիլ զի պիտի ապագայ: Այս կը պահանջեն Լիբանանի շահերը»:

ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

● ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ Ուալիտ Ժոմպլաթ երկկ յայտարարեց Այլիլ եւ Պապատայի գաւազաններուն իր ցանկը, որուն մաս կը կազմեն Պասիմ Սապատ, Այման Երէկ, Սայահ Հընէյ, Անթուր Լամի, Ապտալա Ֆարաճ, Աքրամ Երէկ, Ապտալա Պրէկի, Անթուր Անտարուս եւ Ֆուադ Սատտ:

● ՆԱԽԿԱՆ նախարար Ժորժ Աֆրամ երկկ յայտարարեց իր գլխաւորած ցանկը՝ Քեւրուանի մէջ, որուն մաս կը կազմեն Էլիաս Խազը, Անտուր Լամի, Պիլիպպոս Ֆարաճ, Ապտալա Պրէկի, Անթուր Անտարուս եւ Ֆուադ Սատտ:

● ԽՈՐԴԱՐԱՆԻ նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի երկկ յայտարարեց Պապատայի 2-երկ իր գլխաւորած ցանկը, որուն մաս կը կազմեն նախարար Ղազի Զրհայթի, երեսփոխաններ Հիւսէյն Հաճ Հասան, Մարուան Ֆարէ, Իպրահիմ Պալան, Քասիմ Քասսա, Մուհամմէտ Եղի, Նատիլ Սուքար եւ Մասուտ Նուճիլի:

● ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ համար շահակցութեան նախագահ էլիաս Ապուր Թըք երկկ յայտարարեց, որ թեկնածու է հարակէն (Մերձայուն - Հասպայ), յոյն ուղղափառ աթոռին:

● Թըք ըսաւ, որ ընտրապայքար չի մղեր անձերու կամ հաւաքականութիւններու դէմ, այլ՝ դատի մը համար եւ ինք կը գործակցի բոլոր կողմերուն հետ:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

● Արաքս քաղի սկիզբ: ԸՆ. 01-268489:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԸՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՏԸՐԸ

Վարչապետ Սեյիմ Հրս երկկ վարչապետարանին մէջ ընդունեց իրանի արտաքին գործը նախարարի օգնական Մուհամմէտ Սատորը, որուն կ'ընկերակցէր Լիբանանի մէջ իրանի դեսպան Մուհամմէտ Ալի Սուպահին:

Սատորը ըսաւ, որ Լիբանանի դիմադրութեան ուժերուն նորագոյն իրազորութիւնը լաւագոյն օրինակը պէտք է ըլլայ իսլամական աշխարհին համար, ի խնդիր վերջնական յաղթան կի:

Մուհամմէտ Սատոր վարչապետարանին ետք ուղղուեցաւ դէպի շէյխ Ֆատալայայի ընկերարան, ուր տեսակցեցաւ անոր հետ: Տեսակցութեան աւարտին ան ըսաւ, որ Ֆատալայայի հետ քննարկած է իսլամական հարցեր, ինչպէս նաեւ Երուսաղէմի հարցը:

ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԽԱՂԵՆԻ «ՓՈԹՈՐԿԱԼԻ» ԱՍՈՒԼԻՍԸ

Երեսփոխան Որշէյտ Խապէն երկկ տուաւ մամրոյատուլիս մը, որուն ընթացքին խոստի քննադատեց վարչապետ Սեյիմ Հրսի գլխաւորած կառավարութիւնը: Ան ըսաւ, որ կառավարութիւնը գոյութիւն չունի, իսկ վարչապետը հրաժարած է իր դերակատարութենէ:

Խապէն քննադատութիւններ ուղղեց նաեւ նախկին նախագահ Էլիաս Հըրաուիի եւ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի հասցէին, իսկ ներքին գործը նախարար Միշել Սըրը անուանեց «բռնատիր» եւ հարց տուաւ, թէ ինչպէս ընտրուեց նախարարութիւնները իր տրամադրութեան տակ ունեցող մէկը կրնայ ինչպէս ընտրութիւններուն: Խապէն ըսաւ, որ նախարարական պալատին միջամտութիւններ եղած են Քեւրուանի ցանկին ստեղծումը, որմէ դուրս մնացած է թեկնածու Ֆարիտ Խապէնը:

Վարչապետ Սեյիմ Հրսի տեղեկատուական գրասենյակը պատասխանեց Խապէնի յարձակումներուն, ցաւ յայտնելով, որ ան մաս կը կազմէ այն խմբակին, որ կառավարութիւնն ու պաշտօնական մարմինները քրուադատելով քաղաքական շահեր կը հետապնդեն:

ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՀԱԻԱՔ

Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԻՆԻՆ Ներկայութեամբ «ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱԿԱՏ» ԹԵԿԵՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ

● Գեղարուեստական ձոյն յայտագիր Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 14 Օգոստոս 2000, երկուշաբթի ժամը 8:30ին, Ֆանարի Ժողովրդային Բնակարաններու դահլիճ վրայ:

ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՒ ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՏԱՅԱՅԻ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուքով տեղի պիտի ունենայ Սուրբ Աստուածանի Վերափոխման եւ Պիքֆայայի մատուան ուխտագնացութիւնը:

Այս առիթով մեր ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնեն ուխտի օրուան կապուած հետեւեալ ժամանակացոյցը:

ՌԵՐՔԱԹ, 11 ՕԳՈՍՏՈՍ 2000

● Աղի օրհնութիւն եւ ոչխարներու գնում, առաւօտեան ժամը 10:00ին:

● Երեկոյեան ժամերգութիւն, կեսօր ետք ժամը 5:00ին:

● Այցելութիւն վեհափառ հայրապետին եւ աշահամբոյ՝ բոլոր հաւատացեալներուն համար, երեկոյեան ժամը 8:00է 8:30:

● Գեղարուեստական յայտագիր Համազգայինի «Ընթր» պարախումբին կատարութեամբ, շրջափակին մէջ, իրիկուան ժամը 9:00ին:

● Շարական եւ հոգեւոր խորհրդածութիւն եկեղեցոյ մէջ, իրիկուան ժամը 11:00է 12:00:

ՇԱԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍ

● Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 8:00ին:

● Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 10:00ին:

● Ճաշու ժամերգութիւն, կեսօրուան ժամը 12:00ին:

● Երեկոյեան ժամերգութիւն, կեսօր ետք ժամը 4:00ին:

● Գիշերային ժամերգութիւն, երեկոյեան ժամը 8:00ին, եկեղեցոյ շրջափակին մէջ:

Պիտի պատարագ եւ պիտի բարոզ՝

ԳԵՐՇ. Տ. ՆԱԹԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (Ուրբաթից Լայոց Թեմի Առաջնորդ)

Արարողութեան պիտի նախագահէ եւ ժողովորդին իր պատգամը պիտի փոխանցէ՝

Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅՑ

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն, հանդիսաւորութեամբ վեհափառ հայրապետին:

Պատարագին երգեցողութիւնը պիտի կատարէ «Ճորճիալի» երգչախումբը, ղեկավարութեամբ ՍԵՐԿԱՎ ԿՐԻ. ԲԱՐԻՔԵԱՆԻ:

ԿԵՐԱԿ. 13 ՕԳՈՍՏՈՍ

● Անթիլիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագ եւ պիտի բարոզ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴ

ՔԷՄՓ ՏԵՅՎԻՏԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ

22 տարի առաջ տեղի ունեցավ Քէմփ Տէյվիտի առաջին վեհաժողովը Իսրայելի եւ Եգիպտոսի միջեւ, եւ հակառակ բոլոր անկախութիւններուն, հոն ստորագրուեցաւ արարելիսրայիլեան խաղաղութեան առաջին համաձայնագիրը: Այս տարուան Քէմփ Տէյվիտի վեհաժողովը գիտակցաբար վերոյիշեալին նմանցնելով մեկնարաններ կր կարծէին, թէ անկարելի այս անգամ եւս կրնար պատահիլ պաղեստինեկտորայիլեան համաձայնագիրի ստորագրութեան: Սակայն վեհաժողովը ձախողեցաւ եւ երկու կողմերը ձեռնուռնայն վերադարձան:

Քէմփ Տէյվիտի ձախողութենէն ետք Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլինթըն կ'ուզէր պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եասէր Արաֆատի վրայ ճնշում բանեցնել եւրոպական եւ արաբ դաշնակից երկիրներու ճամբով: Ամերիկացի պատասխանատուներու համաձայն, Միացեալ Նահանգներու դաշնակիցները կրնան Արաֆատի համոզել, որ ան գիշումներ կատարել խաղաղութեան համաձայնագիրը իրագործման համար:

Միեւնոյն նպատակով Միացեալ Նահանգներու արտաքին գործընթացի նախարար օգնական Էտուարտ Ուաքըր պիտի այցելէ արաբական մայրաքաղաքներ, որպէսզի արաբ ղեկավարները որոշուին Երուսաղէմի գծով լուծուած յանգիլ:

Սակայն տակաւին յստակ չէ, թէ Եւրոպա եւ միջինարեւելեան երկիրներ պիտի ընդունին պաղեստինցիներուն վրայ ճնշել: Վեհաժողովի առաջին օրերուն ընթացքին նախագահ Պիլ Քլինթըն Երուսաղէմի հարցին գծով խորհրդակցեցաւ Մարտի, Յորդանանի, Ալուսական Արաբիոյ եւ Եգիպտոսի ղեկավարներուն հետ, բայց անոնցմէ միայն Յորդանանի թագաւոր անձամբ խօսեցաւ Արաֆատի հետ, որպէսզի ան չմերժէ ամերիկեան առաջարկները:

ԱՐԱՔԱԿԱՆ «ԵՐՎՈՏ» ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆԵՐՍՍՍԵԼՈՎ ՎԱՇՐԻՆԵՆ

Քէմփ Տէյվիտի վեհաժողովին ցուցաբերած խորանջին կառավարութեան անգիջող ու կարծր որոշումներուն դիմաց Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆ որոշեց նեցուկ կանգնել պաղեստինցիներուն: Գահիրէի մամուլին համաձայն, պաղեստինցիները շատ դժուար կացութեան մէջ կը գտնուէին վեհաժողովին ընթացքին թէլ Աբիս եւ Ուաշինկթընի ճնշումներուն պատճառով, մասնաւորաբար ինչ կը վերաբերի Երուսաղէմին: Արաբական երկիրներու զօրակցութիւնը ապահովելու համար Մուսարաֆ անակնկալ այցելութիւն մը տուաւ Ալուսական Արաբիա (Կիւրակի, 23 Յունիսին) եւ տեսակցութիւն ունեցաւ թագաւոր Ֆահատի եւ ներկայիս երկիր կառավարող գահաժառանգ իշխան Ապտալայ Պըն Ապտէլ Ազիզի հետ:

Հանդիպումէն ետք Եգիպտոս եւ Ալուսական Արաբիա վերահաստատեցին, թէ Աբեւելեան Երուսաղէմին վերաբերեալ արաբական որոշումը «վերնական» է, որովհետեւ Երուսաղէմ «Սուրբ» քաղաք է եւ հոն կը գտնուին Աքսա եւ Օմար մզկիթները, Մուսուլի եկեղեցիներ եւ այլ սրբավայրեր:

Եգիպտոսի քաղաքական շրջանակներուն մէջ նոյնիսկ կ'արժարժուի «Իսրայելեան մերիկեան» ճնշումներուն դէմ բողոքելու կարելիութիւնը՝ սկստական քարիւղի արտադրութիւնը պակսեցրելով: 1973ին Եգիպտոսի եւ Ալուսական Արաբիոյ միջեւ տեղի ունեցած համաձայնութեան

նէն անմիջապէս ետք արաբական երկիրները օգտագործեցին քարիւղի «զնչքը» իսրայելեան արաբական տագնապի գծով արդար լուծումի յանգելու համար:

Ներկայիս արաբական երկիրները տագնապը այդքան լուրջ չեն համարեր, սակայն մեկնարաններու վերլուծումին համաձայն, այս կարելիութեան արժարժուածը բաւարար է պաղեստինցի բանակցողներուն դիրքը գորացնելու համար: Յորդանանի Հիւսնի թագաւորին եւ Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի բացակայութեան, եգիպտացի ղեկավարը միակ ազդեցիկ արաբ նախագահ է, որ կրնայ արաբական աշխարհի պետութիւնները համախմբել: Հետեւաբար Մուսարաֆ խօսեցաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու գահաժառանգ իշխան շէյխ Նալիֆ Պըն Ջալէտի հետ, նկատելու նշանով, որ Ա. Մ. Էմիրութիւնները եւս քարիւղի արտադրութեան կարելու դերակատարներն են: Պըն Ջալէտ նաեւ ճանչցուած է իր կարծի կեցուածքով Երուսաղէմի իսլամական ու իստաաեղիներուն նկատմամբ:

Ա. Մ. Էմիրութիւններու մէջ «Ալ Նալիլ» թերթը կը գրէր. «Արաբական երկիրները պէտք է միասնաբար ժողով մը գումարեն Երուսաղէմը գրաւող ճանկերէն ազատելու համար»: Արա-

բական Հիլալի ընդհանուր քարտուղար Իսմաիլ Ապտէլ Մեկիտ իր կարգին րասւ. «Երուսաղէմը միայն պաղեստինեան հարց մը չէ. ան շատ մեծ կարեւորութիւն ունի բոլոր իսլամներուն եւ քրիստոնեաներուն համար»:

ՔԷՄՓ ՏԵՅՎԻՏԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ ՈՐՈ՞՞ ԴԻՐՔ ԿՐԵՆ ԿՐԵՆ ԶՈՐԱՅՄ, ՊԱՐԱՔԻ, ԹԵ ԱՐԱՔԱԹ

Վեհաժողովի աւարտին Պիլ Քլինթըն կ'եզրակացնէր, թէ Պարաֆ շատ աւելի ճկուն եւ վճռական կեցուածք ցուցաբերած էր համաձայնագրի ստորագրութեան գծով: Ամերիկացի նախագահը նաեւ իր կարծիքը յայտնեց պաղեստինցի ղեկավարին մասին՝ ըսելով, թէ ան «պատմական առիթ» մը կորսնցուցած է, ապա վեհաժողովի ձախողութիւնը վերագրեց պաղեստինցիներու կարծի կեցուածքին:

● **ՈՒՐՐԱԾ** – Պենիամին Նեթանիահուի վարչապետութեան շրջանին իսրայելեան պետութիւնը կը կրէր «անգիջող» անակաւոր, որովհետեւ Նեթանիահուի իր մերժելը խանդավառութեամբ եւրոպական միտումներով խաղաղութեան բեմ բարձրանալ: Սակայն, երբ Պարաֆ յաջողեց

ՊԱՐԱՔԻ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒ «ԱՐԱՔԱՐԿՆԵՐ»Ը ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԱՍԻՆ

Մինչեւ օրս տակաւին յայտնի չէ, թէ ճիշդ ի՞նչ անաջարկներ եղան Երուսաղէմի մասին Էմփ Տէյվիտի վեհաժողովին ընթացքից: Սակայն 26 Յուլիսին իսրայելեան մամուլը հրապարակեց Երուսաղէմի մասին Իսրայելի վարչապետ Էհուտ Պարաֆի եւ Միացեալ Նահանգներու առաջարկները: Ձանգաւոր աղբիւրներ ցախատեսեցին, որ այս անաջարկներու վրայ հիմնուի յառաջիկայ բանակցութիւնները:

1967ին իսրայել իր հողերուն կցած էր Արեւելեան Երուսաղէմը եւ անկէ ի վեր հոն հաստատուած են 180 հազար իսրայելացիներ: Այսպէս, իսրայել եռապատկեց Երուսաղէմը քաղաքապետութեան սահմանները:

Աղբիւրներ յայտնեցին, թէ այս վարջին վեհաժողովին ընթացքի իսրայել պահանջած էր Արեւելեան Երուսաղէմը պահել իսրայելեան գերիշխանութեան տակ, մերժելով, որ ապագային պաղեստինեան պետութիւնը հոն հիմնէ իր մայրաքաղաքը:

Սակայն Էհուտ Պարաֆ ընդունած էր քաղաքի սահմանները փոփոխութեան ենթարկել սրբավայրերը ընդգրկող արաբական թաղերը պաղեստինեան իշխանութեան յանձնելու համար:

«Ըլ իսրայէլ» պետական ծայնասփիւռից համաձայն, Էհուտ Պարաֆ ցաւե առաջարկած էր պաղեստինեան ինքնավարութեան «յատուկ դրութիւն» մը որդեգրել Հին Զաղաքի գահաձան թաղերուն համար: Նաեւ յատուկ ճամբայ մը պաղեստինցիներուն աղիթը պիտի ընձայէր մզկիթներու հրապարակայնացնելու: Նոյնպէս, Պարաֆի առաջարկին համաձայն, այս հրապարակը պիտի մնար իսրայելեան գերիշխանութեան տակ, սակայն «կրօնական ինքնավարութեան յատուկ դրութեան» մը որդեգրումը կը նախատեսուէր:

Փոխարքարծար իսրայել կ'ուզէր, որ

պաղեստինցիները ընդունին, որ իսրայելեան պետութեան միանգամ Մեծ Երուսաղէմի հրեական թաղերը, ինչպէս նաեւ ժեւապի Զեպիի, Մալե Էմիմի մի եւ Էֆրաթի մասն սահմանային արուարձանները:

Աղբիւրներ հաղորդեցին, թէ Արաֆաֆ այս առաջարկները մերժել էր պահանջած է Արեւելեան Երուսաղէմի ամբողջական յանձնումը՝ պաղեստինեան պետութեան մայրաքաղաքը հոն հիմնելու համար: Բայցեայնպէս Արաֆաֆ ընդունած էր Իսրայելի յանձնել Հին Զաղաքի «հրեական թաղը» ու Լազի պաղա:

Այլ աղբիւրներ հրապարակեցին ամերիկեան առաջարկները Երուսաղէմի կարգավիճակի մասին: Ամերիկեան առաջարկը Էր հիմնել երկու մայրաքաղաքներ: Իսրայելեան մայրաքաղաքը պիտի կոչուէր «Երուսաղէմ» ու պիտի բաղկանար հետեւեալ բաժիններէն. Հրեական քաղաքը, Արեւելեան Երուսաղէմէն բաժին մը եւ Հին Զաղաքը, որուն պիտի միանային բազմաթիւ դրացի գաղթափայրեր:

Պաղեստինեան մայրաքաղաքը պիտի կոչուէր «Ալ Քուսա», եւ պիտի բաղկանար Արեւելեան Երուսաղէմի մաս կազմող Կամ աճոր սահմանակից արաբական թաղերը, ինչպէս՝ Պէյթ Լահմիա եւ Օրաֆաթ (հիւսիսային շրջաններու մէջ), ժապալ Մուլքապը եւ Ում Թուպա հարաւային թաղերն ու արեւելեան շրջանէն Ապու Տիւ թաղը:

Աղբիւրներուն համաձայն, ամերիկացիք ցաւե առաջարկած պիտի ըլլային, որ պաղեստինցիները Տաճարի բլուրին, այսինքն՝ մզկիթներու հրապարակին վրայ ինքնավարութեան իրաւունք ստանան եւ որդեգրուի «պաղեստինեան հսկողութեան» մասն դրութիւն մը:

«ԼԸ ՄՈՆԵ ՏԻՓԼՈՍԿՈՒԹ»

իրեն, ան բարեկամական կապեր հաստատեց անգլիացիներուն, գերմանացիներուն, ֆրանսիացիներուն եւ մասնաւոր ճանիակցիներուն հետ:

Իսկ վեհաժողովին ետք Պարաֆի խորհրդատուները յայտնեցին, թէ վարչապետը բանակցութիւններուն ընթացքին յաջողեցաւ Իսրայելը ներկայացնել իրեն «տրամաբանական կողմ», որ հետագային իր ուսցմավարական կապերը կ'ամրապնդէ Միացեալ Նահանգներուն հետ:

● **ԱՐԱՔԱԹ** – Մեկնարաններ կ'ըսեն, թէ Պարաֆի խոսեմ կեցուածքին դիմաց Արաֆատի ժողովրդականութիւնը կրնայ նուազիլ, որուն հետեւեալով պաղեստինցիներուն ստացած ստանդարտները կրնան կրճատուիլ:

Սակայն այլ կարծիքներ կան, թէ Օսլոյի համաձայնութիւններէն ի վեր առաջին անգամ ըլլալով Արաֆատը չմեղադրուեցաւ: Պաղեստինեան իշխանութեան ղեկավարի համակիրներն ու թրջնամիները յայտնեցին, թէ Արաֆատը վեհաժողովին ընթացքին յաւաստեց պաղեստինեան դատը՝ գնահատելով անոր կեցուածքը Երուսաղէմի հարցին վերաբերեալ:

Բանակցութիւններուն մանրամասնութիւնները տակաւին չեն բացայայտուած եւ ոչ ոք տեղեակ է Արաֆատի կատարած վիճումներէն, սակայն պաղեստինցիներուն համար կարեւորը արդիւնքն է: Պաղեստինցի ղեկավարը իր ժողովուրդի սկզբունքներուն հաւատարմութեամբ պահանջած է 1967ին գրաւուած հողերուն վերադարձը, Արեւելեան Երուսաղէմն ու պաղեստինցի գաղթականներու տուեղարձի իրաւունքը:

«Պաղեստինցիներու մէջ տկար ժողովրդականութիւն վայելելով» Արաֆատը արաբական աշխարհին մէջ յաղթանակի մը պէտք ունի, եւ իսկապէս իր ժողովուրդը իրեն նեցուկ պիտի կանգնի այս վեհաժողովին ետք», հաստատեց պաղեստինեան թերթի մը խմբագիրը:

Սակայն պաղեստինցիները բուն կերպով կը բողոքեն արաբական պետութիւններու ցուցաբերած թուլութեան դէմ՝ Քէմփ Տէյվիտի դժուար բանակցութիւններուն ընթացքին: «Եթէ պաղեստինցիները թույլ կերպով պաշտպանէին Երուսաղէմը, առնք բոլոր կողմերէն յարձակումի պիտի ենթարկուէին: Բայց ներկայիս, երբ Եասէր Արաֆատը գորաւոր կերպով կը պաշտպանէ Երուսաղէմը ու գաղթականներու դատը, հաստատուած ձայնը կը բարձրանան իրեն նեցուկ կանգնելու համար», բողոքեց Պաղեստինեան խորհուրդի նախագահ Սեյիմ Ջահանուն՝ Եգիպտոսն ու Ալուսական Արաբիան բացառութիւններ համարելով:

Իսրայելի մէջ անկայուն վիճակը կը մնայ անփոփոխ: Իսրայելի վարչապետը կը մեղադրուի իր կատարած գիշումներուն համար:

Համաձայն ու Պաղեստինի Ազատագրութեան ժողովրդական ճակատը կը պահանջեն, որ Ինթիֆատան ու գինեալ պայքարը վերսկսին: Կայ նաեւ 13 Սեպտեմբերի պայմանագրով (պաղեստինեան իշխանութիւնը խոստացած էր այս թուականին հռչակել պաղեստինեան անկախ պետութիւնը):

Այսպէս կրնանք մեկնարանել Քէմփ Տէյվիտի վեհաժողովին ձախողութիւնը: Կրնախատեսուի, որ բանակցութիւնները մօտիկ ապագային վերսկսին, սակայն Իսրայելի վարչապետը քաղաքականացնելու տկարացած է, Միացեալ Նահանգներու նախագահը հանգստանալ կը կոչուի, իսկ պաղեստինցի ղեկավարը չ'երիտասարդանար:

«ԼԸ ՄՈՆԵ ՏԻՓԼՈՍԿՈՒԹ»

ՏԵՍԱԵՐԻՉՆԵՐԸ ԲԱԶՄԱՊԱՏԿԵՑԻՆ ՀԸԶՊԱԼԼԱՅԻ ՀԱՐՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Չըզպալլա Կուսակցութիւնը, որ իսրայելացիները դուրս մղեց հարաւային Լիբանանէն, սկսաւ իբրեւ ոչ արհեստավարժ զինեակներու պոստի խուճը մը: Այսօր անիկա վերածուած է բարձրորակ մարտավարական շարժումի մը, որ գիտցաւ յարմարագին ձեւով օգտագործել նորօրեայ պատերազմի արդիական զենք մը՝ պատկերասփիւռը:

«Տեղեկատուական միջոցները իբրեւ զենք օգտագործելը ճակատամարտի մը գուրաւորագրեցութիւն ունեցաւ», ըսաւ հարաւային Լիբանանի մէջ Չըզպալլայի աւագ հրամանատարներէն շէյխ Նապիլ Քաուէ հարցազրոյցի մը ընթացքին: Ան խօսեցաւ ոչ միայն այն ձեւերուն մասին, որ Չըզպալլա որդեգրեց իր ազդեցութիւնը, ուզածավարութիւնն ու զինամթերք բարելաւելու եւ զարգացնելու, այլեւ իրենց յաջողութիւնները տեսաերիզներու վրայ արձանագրելու եւ տեղեկատուական միջոցներուն ցրուելու մասին:

